ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 սեպտեմբերի երեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

135
(2615)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 99

Այսօր լրանում է 44-օրյա պատերազմի երկրորդ տարին: Այս երկու տարվա ընթացքում վարչապետ Նիկոլ Փաշինյանը Արցախյան հարցի, հետո արդեն՝ 44-օրյա պատերազմի մասին խիստ հակասական հայտարարություններ է արել ու խաբել ժողովրդին՝ մեկ ասելով, թե կարող էր կանխել պատերազմը, մեկ ասելով, թե դա հնարավոր չէր: «Կարող էինք կանխել պատերազմը, որի արդյունքում կունենայինք նույն վիճակը, իհարկե՝ առանց զոհերի». սա նրա՝ 2022 թվականի ապրիլի 13-ին արած հայտարարությունն է, ինչից հետո՝ ուղիղ մեկ օր անց, ՀՀ վարչապետը կրկին հակադարձեց իրեն՝ ասելով թե՝ պատերազմն իրականում կանգնեցնել կամ կանխել հնարավոր չէր, քանի որ «պատերազմը Շուշիի համար էր»: Իսկ, ահա, երբ նա նոր էր դարձել վարչապետ, խրոխտ հայտարարում էր, թե առանց ժողովրդի համաձայնության, որեւէ թուղթ չի ստորագրի: «Որեւէ մեկը չմտածի, թե ես ձեզնից թաքուն որեւէ թուղթ կստորագրեմ կամ որեւէ գործողություն կանեմ: Երբ տեսնեմ, որ կա տարբերակ, որի շուրջ իսկապես կարելի է խոսել, ես կգամ եւ կկանգնեմ այստեղ, բոլոր մանրամասնություններով կներկայացնեմ ձեզ, եւ դուք կորոշեք՝ մենք գնում ենք այդ տարբերակով կարգավորման, թե չենք գնում»,- 2018-ի օգոստոսի 17-ին ասում էր նա: Բացի դրանից, մեկ ասում է, թե Ադրբեջանի հետ բանավոր պայմանավորվածություն չի եղել, մեկ հերքում ինքն իրեն, թե դրա մասին բանավոր են պայմանավորվել: Մեկ այլ հանգամանք եւս. 2020-ի դեկտեմբերի 28-ին նա, հարցազրույցներից մեկում անդրադառնալով Ջանգելանի ու Կուբաթլուի շրջաններին, նշում է. «Քանի որ նոյեմբերի 9-ի հայտարարության ստորագրման պահին Կուբաթլուի եւ Ջանգելանի շրջանների 90 եւ ավելի տոկոսը, ցավոք սրտի, եղել է արդեն Ադրբեջանի վերահսկողության ներքո, եղել է բանավոր պայմանավորվածություն, որ այդտեղ մենք պետք է սահմանային կետերի՝ ոչ թե սահմանի, այլ որոշակի կետերի ճշգրտում իրականացնենք: Եվ այն ժամանակ, երբ պարզ է եղել, որ այս հարցի շուրջ կարող է տեղի ունենալ, կարող է բռնկվել պատերազմ, որը կարող է անցում կատարել դեպի Սյունիքի մարզ, մենք միջոցներ ենք ձեռնարկել՝ Սյունիքի անվտանգությունն ապահովելու համար: Ընդ որում՝ ես սրա մասին նախապես եմ ասել, իմ ուղերձներում ես սրա մասին նախապես եմ ասել: Ո՞րն է այդ ձեռնարկված միջոցների էությունը. այն է, որ վերահսկողության տակ գտնվող գոտին համընկնի ՀԱՊԿ պատասխանատվության գոտում գտնվող տարածքների հետ»:

Իրարամերժ այս հայտարարությունները եւս մեկ անգամ վկայում են, որ Նիկոլ Փաշինյանը ստել է:

Կոլապսային իրավիճակ՝ Սիսիանում. «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ քաղաքական իշխանությունները Սիսիանի ընտրությունների արդյունքները համարել են կոլապս եւ չգիտեն՝ ինչ է սպասվում Սիսիանում: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ անգամ քննարկվել է վերաքվեարկության հարցը՝ առանց ՔՊ-ի, կամ, միգուցե, նոր ընտրությունների կազմակերպման տարբերակը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Սյունիքի մարզի Սիսիան եւ Լոռու մարզի Ալավերդի համայնքների ՏԻՄ ընտրություններում գրանցած արդյունքներն իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության համար անակնկալ են եղել: Վերջիններս մինչեւ վերջ համոզված են եղել, որ չնայած ամեն ինչին՝ իրենց հաջողվելու է այդ համայնքներում առավելություն ունենալ. շատ օրենսդիրներ անձամբ էին քարոզարշավ անում: Իհարկե, Սիսիանում ՔՊ-ն առավելություն ունի, սակայն միանձնյա՝ քաղաքի կառավարումը ստանձնելու համար ոչ բավարար թվով է ձայներ ստացել: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Սիսիան համայնքում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Կարեն Համբարձումյանն անում էր ամեն ինչ, որ Սիսիանի քաղաքապետ ընտրվի Արմեն Հակոբջանյանը: Ի դեպ, Հակոբջանյանի շտաբի պետը հենց Կարեն Համբարձումյանն էր: Երկրորդ տեղում ԱԺ պատգամավոր Արթուր Սարգսյանի թիմի թեկնածու Հայկ Առաքելյանն է: Ուշագրավ է սակայն, որ մյուս թեկնածուն՝ ՔՊ-ական պատգամավոր Կարեն Համբարձումյանի կնոջ քրոջ ամուսնու՝ բաջանաղի եղբայրն է՝ Արա Ջաքարյանը: Վերջինս առաջադրվել էր «Ապրելու երկիր» կուսակցության ցուցակով եւ գրավել երրորդ հորիզոնականը: Այստեղ ՔՊ-ն որեւէ ուժի հետ պետք է դաշինք կազմի՝ քաղաքի կառավարումը ստանձնելու համար: Եվ հենց այս հանգամանքով պայմանավորված են իշխանությունները մտահոգված, քանի որ կարծում են՝ բարդ է լինելու մյուս ուժերից որեւէ մեկի հետ միանալը: Ավելին՝ ՔՊ-ի ներսում էլ կարծիք է հնչեցվել, որ բացառված է՝ որեւէ մեկը միանա ՔՊ-ին:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Ազգային անվտանգության ծառայությունը քրեական գործ է հարուցելու, եւ բավականին խիստ է դրվել հարցը. պարզել, թե ինչպես են երկու քուրդ ազատամարտիկներ Աթիլլա Չիչեքին եւ Հուսեյին Յըլդըրըմին Թուրքիայում հայտնվել: Նշենք, որ Աթիլլա Չիչեքին եւ Հուսեյին Յըլդըրըմին մեղադրվում էին, որ չունենալով զենք եւ ռազմամթերք ձեռք բերելու իրավունք՝ 2021 թվականի օգոստոսի 16-ին անցել են Արաքս գետն ու ապօրինի հատել ՀՀ պահպանվող պետական սահմանը: Արդյունքում՝ ՀՀ վերաքննիչ դատարանը 5 տարի ժամկետով ազատազրկման էր դատապարտել նրանց, որը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան՝ 3 տարի ժամկետով: Քուրդ ազատամարտիկներն ազատ են արձակվել հենց դատական նիստերի դահլիճից: Այսինքն՝ նրանք եղել են ազատության մեջ, եւ, ահա, 7 ամիս ազատության մեջ գտնվելուց հետո՝ երեկ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանն է ահազանգել նրանց դեպքի մասին, որ քուրդ ազատամարտիկները, որոնք գտնվել են Հայաստանում եւ պայքարել են թուրքական բռնատիրության դեմ, այսօր Թուրքիայում են: Ինչպե՞ս են նրանք հայտնվել Թուրքիայում, ահա հենց այս առեղծվածն էլ, հուսանք, կպարզի Ազգային անվտանգության ծառայությունը: Ավելի վաղ նրանց արտահանձնումը հերքել էր նաեւ արդարադատության նախարարությունը: Փաստորեն, պետական ատյանները անտեղյակ են՝ մեր երկրից Թուրքիա հայտնված քրդերի դեպքից:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վերջին մեկ տարվա ընթացքում ոստիկանական համակարգում բազաթիվ դեպքեր են գրանցվել, երբ մանկավարժը (ընդհուպ՝ երեւանյան դպրոցներում աշխատող) թողել է ուսուցչի աշխատանքն ու դիմել Պարեկային ծառայություն՝ աշխատանքի: Մեկ դրույք դասաժամ ու դասղեկական ժամեր ունեցող, հարակից այլ աշխատանքներ անող ուսուցիչը հաճախ հազիվ 100 հազար դրամ աշխատավարձ է ստանում, ու բնական է, որ նրան կարող է գրավել 400 հազար դրամ աշխատավարձ ենթադրող աշխատանքը: Մեզ հասած տեղեկություններով՝ թեեւ պատկան մարմինները վիճակագրություն չեն ներկայացնում, բայց նման ցանկություն ունեցողների կամ ծառայություն դիմած անձանց թիվը փոքր չի եղել: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Պարեկային ոստիկանության պետ Արթուր Ումրշատյանը, թեեւ հաստատեց, որ նման՝ ուսուցչի պարեկ դառնալու նախադեպեր եղել են, բայց հակադարձեց՝ հստակ վիճակագրություն չկա, այնպես չի, որ ուսուցիչ-պարեկները մեծ թիվ են: «Եթե պայմանական ընդունենք, որ ծառայությանը 1350 հոգի է դիմել, ապա նրանցից 5-6 հոգին է մանկավարժ եղել: Տեսեք՝ մի աղջիկ, օրինակ, Մեղրիից էր դիմել, բայց նրա նպատակն էլ, ավելի շատ, Երեւան տեղափոխվելն էր: Այո, ունենք նման դեպքեր, բայց դրանք բացառիկ դեպքեր են, ու որ ասեմ՝ մանկավարժները տարերայնորեն դուրս են գալիս ու գալիս են Պարեկային ծառայություն, ապա սուտ կլինի, չկա նման բան: Իհարկե, որպես ծառայության պետ ասեմ՝ ցանկալի կլիներ, որ կրթական բարձր ցենզով մարդիկ ավելի շատ դիմեին, բայց, իհարկե՝ ոչ դպրոցի հաշվին»,- ներկայացրեց ծառայության պետը:

ԱՊՏԱԿ՝ ՌԴ-ԻՆ

ՀԱՊԿ-ԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ

«Ազատ խաղաղացի» հ/կ նախագահ Հովսեփ Խուրշուդյանն այն համոզմանն է, որ Հայաստանը պետք է նախաձեռնի ՀԱՊԿ-ից դուրս գալու գործընթաց ու իրական ապտակ հասցնի Ռուսաստանին: ArmLur.am -ի հետ զրույցում նա հույս հայտնեց, որ այս՝ գործող իշխանությունները նման գործընթաց կսկսեն ի վերջո:

-Պարոն Խուրշուդյան, այսօր Դուք նույնպես Հայաստանի արտաքին գործերի նախարարության առջեւ մասնակցում եք հանրահավաքին: Պահանջը Հայաստանի Հանրապետության՝ ՀԱՊԿ-ից դուրս գալն է, եթե նման գործընթաց սկսի, ինչը լրջագույն ապտակ է Ռուսաստանի Դաշնությանը, ինչպե՞ս եք պատկերացնում այդ ամբողջ գործողությունների համալիրը:

-Նախ՝ Ռուսաստանը Հայաստանին վաղուց ապտակել է, ոչ միայն ապտակել է, այլ ավելի ուժգին վնասներ է հասցրել, եւ Ձեր ասած ապտակը շատ տեղին կլինի՝ գոնե պետական արժանապատվությունը ապահովելու համար, բայց մենք չպետք է մոռանանք, որ այդ ապտակը ունի այլ կողմ. այդ կողմից՝ հարաբերությունների վատթարացում է Ռուսաստանի հետ, բայց մյուս կողմից՝ մեզ համար լայն հնարավորություն է բացում՝ մեր անվտանգությունը բացելու, արեւմուտքի հետ հարաբերությունները սերտացնելու շնորհիվ: Մենք այլեւս կդիտվենք արեւմուտքի կողմից մի ուժ, որը պատրաստ է քայլ անել Ռուսաստանի կայսրությունից պոկվելու, եւ Ռուսաստանի այս՝ երկարատեւ դավաճանական քայլերին «ոչ» ասելու համար: Եթե մենք պետական արժանապատվություն չունենանք, ոչ ոք մեզ չի աջակցելու: Խոսքը նրա մասին չէ, որ ինչ որ մեկը գալու է, որ մեր փոխարեն կռվի, մեր ժողովուրդը կռվել է եւ կկռվի մեր սահմանների համար, բայց դրա համար պետք է զենք ունենանք. ո՛չ Արցախյան պատերազմի ժամանակ ուրիշները եկան եւ կռվեցին, եւ ո՛չ էլ հիմա են Հայաստանի սահմանների համար կռվելու գալու: Քանի՞ անգամ դիմեցինք ՀԱՊԿ-ին, ոչ ոք չեկավ ու չի էլ գալու: Երբ այս իրողությունը հասկանանք ազգովի, մենք կարող ենք դուրս գալ եւ գնալ այնտեղ, որտեղ մեզ գոնե զենք կտան, որ կռվենք, ինչպես օրինակ՝ Ուկրաինան է կռվում: Մենք պետք է պաշտպանենք մեր սահմանները արդիական զենքերով: Ներկա պահին մենք միայն կարողանում ենք մտածել ադրբեջանցիներին դիրք չտալու մասին, այնինչ պետք է մտածենք՝ դիրքեր հետ բերելու մասին:

-Նիկոլ Փաշինյանն ասում է՝ մեզ առհասարակ զենք չեն վաճառում. ո՞վ է մեզ զենք վաճառելու, եւ ինչպե՞ս եք մեկնաբանում այդ հայտարարությունը:

-Քանի դեռ մենք այսպես ամուր՝ ռուսաստանի պոչը բռնած ենք, ոչ մեկը մեզ զենք չի էլ վաճառի, լավագույն դեպքում, եթե վաճառեն, ապա 3-րդ կարգի երկրներ, 3-րդ կարգի զենք, որով անգամ չենք էլ կարող կռվել: Ադրբեջանը ստանում է լավագույն զենքերը Իսրայելից եւ Թուրքիայից, մեզ անհրաժեշտ է գոնե այդ մակարդակի եւ ծավալի զենք:

-Գուցե բանակցելու հմտությունն՞ր ունեն Ձեր կողմից նշված այդ երկրները կամ նրանց ղեկավարները:

-Մենք հենց դրա համար էլ գործող իշխանություններից պահանջում ենք, որ իրենք՝ իրենց բանակցելու հմտությունները զարգացնեն:

-Արդյո՞ք խելամիտ է նման պահանջը, պարոն Խուրշուդյան: Չորսուկես տարի է ինչ նրանք իշխանության են, հույս կա՞, որ կարող են տանել բանակցություններ, որոնք Հայաստանի պետական շահերից կբխեն:

-Այնպես չէ որ անհույս է. այսօրվա արտաքին քաղաքական քայլերը, որ տեսնում ենք, իշխանությունների մշտական այցելությունները, պատահական չեն բնականաբար: Այս ամենը խոսում է այն մասին, որ առանց ՀԱՊԿ-ից դուրս գալու՝ որոշակի հաջողության հասել են: Ես վստահ եմ, որ եղել են բազմաթիվ հանդիպումներ, որոնք չեն բացահայտվում, այս ամենը նշանակում է, որ որոշակի հույս կա, մնում է քաջություն դրսեւորել, այստեղ անգամ հմտություններ անհրաժեշտ չեն:

-Բայց ամեն վայրկյան վտանգ կա, որ արկերը կարող են ընկնել Հայաստանի սուվերեն տարածքի վրա:

-Դե մենք առայժմ տեսնում ենք, որ Միացյալ Նահանգների միջնորդությունը գործում է, եւ կանգնել է պատերազմը՝ ի տարբերություն Ռուսաստանի միջնորդության, որը չգործեց:

-Այս դեպքում Ձեր կարծիքով ու՞մ միջնորդությունն է, քանի որ Ռուսաստանն ասում է՝ իմ միջնորդությունն է, իսկ ԱՄՆ-ն ասում է, թե իր միջնորդությունն է:

-Ես հորդորում եմ հետեւել պաշտոնական տեղեկատվությանը: Պաշտոնական տեղեկատվությունը եղել է Հայաստանի բարձրագույն իշխանության կողմից, որ սա եղել է Միացիալ Նահանգների միջնորդությունը, որի համար հատուկ շնորհակալություն են հայտնել: Նույն բանը կրկնել է Միացյալ Նահանգները, հիմա կողքից Ռուսաստանը ուզում է մեջ ընկնել: Ռուսական միջնորդություն եղել է, բայց դա ոչնչի չի բերել: Ադրբեջանը այդ միջնորդությանը չի արձագանքել, քանի որ նախապես համաձայնեցված է եղել Ռուսաստանի հետ: Պարզ է, որ նման միջնորդությունը չէր կարող գործել:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱԺ-ՈՒՄ

ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱՆ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Երեկ Խորհրդարանում հյուրընկալեցի Երեւանում ԵԽ գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտին, ԵԽ խոսքի ազատության հարցերով համագործակցության բաժնի վարիչ Արդիտա Աբդիուին եւ «Հայաստանում լրատվության ոլորտի կարիքների գնահատման վերաբերյալ» զեկույցի հեղինակ Քրիստինա Ռոզգոնիին»: Այս մասին հայտնել է Ազգ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Խոսեցի Հայաստանում լրատվության ոլորտում առկա մի շարք խնդիրների մասին, մասնավորապես՝

- մինչպատերազմական եւ հետպատերազմական շրջանում մեդիա ոլորտի խնդիրների առաջնահերթությունների,
- համացանցում ազգային հերոսների (Մոնթե Մելքոնյան, Գարեգին Նժդեհ…) մասին հրապարակումների դեպքում լրատվամիջոցների էջերի, լրագրողների եւ օգտատերերի բլոկավորման,
- լրատվական դաշտի բեւեռացվածության, Նիկոլ Փաշինյանի կողմից սեւերի ու սպիտակների բաժանված լինելու,
- Մեդիագրագիտության մակարդակի բարձրացման անհրաժեշտության,
- լրագրողներից ու լրագրողական կազմակերպություններից գաղտնի, վերջիններիս առնչվող օրենքներ ընդունելու,
- լրագրողների դեմ բռնությունների,
- լրագրողական աղբյուրների պաշտպանվածության,
- լրատվամիջոցների ֆինանսական թափանցիկության,
- լրագրողներին գաղտնալսման անթույլատրելիության,
- լրագրողների եւ լրատվամիջոցների իրավահավասարության մասին, կոչ արեցի միջազգային գործընկերներիս՝ իրենց կողմից եւս տարբերակված մոտեցում չցուցաբերել հայաստանյան լրատվամիջոցների նկատմամբ:

Մեդիադաշտում հավասար հնարավորություններ պետք է ունենան բոլորը, եւ դա պիտի խրախուսեն նաեւ միջազգային մեր գործընկերները»:

«ԿԱՐԵԼԻ ԷՐ ԶԵՆՔ ԱՌՆԵԼ»

Ռազմական փորձագետ, «Հենակետ» վերլուծական կենտրոն ՀԿ-ի ղեկավար Վիտալի Մանգասարյանն ասում է, որ երկու տարում՝ 44-օրյա պատերազմից հետո, պաշտպանության նախարարությունում սահմանների կահավորման ու զենք ձեռք բերելու առումով, անխոս, հնարավոր էր մի շարք փոփոխություններ անել: ArmLur.am-ի հետ զրույցում նա նշեց, որ պաշտպանական քաղաքականություն իրականացնող գերատեսչությունում նախ պետք էր կոմպետենտ ղեկավար նշանակել, ավելին՝ այդ երկու տարում հնարավոր էր 5-6 ամիս ԳՇ պետի պաշտոնը թափուր չթողնել. ինչն իր ուղղակի եւ անուղղակի հետեւանքները թողեց բանակի մարտունակության վրա: «Մինչ այս պահը ԳՇ հետախուզության վարչության պետի պաշտոնում նշանակված մարդ չկա. ահա այդ ամենն էր անհրաժշտ իրականացնել 2 տարվա ընթացքում: Երկու տարին բավական էր հասկանալու համար, որ թշնամական հարեւանի հետ, առնվազն այս փուլում, հնարավոր չէ, այսպես կոչված, «խաղաղության դարաշրջան» բացել: Հասկանալ նաեւ, որ այդօրինակ թեզերով բթացնում ու իրականության զգացումից կտրում են մարդկանց: Երկու տարվա ընթացքում կարելի էր պարգեւավճարներ չստանալ եւ այդ միջոցները ուղղել բանակի հզորացման գործին»,-մեզ հետ զրույցում շեշտում է ռազմական փորձագետը: Ըստ նրա՝ երկու տարում կարելի էր հասկանալ նաեւ, որ դիվանագիտական բլոկը պետք է բաղկացած լինի փորձառու դիվանագետներից, ոչ թե լավ անգլերեն կամ իսպաներեն իմացող մարդկանցով: «Ահա այս ամենն ու մի շարք այլ հանգամանքները ուղիղ կապ ունեն պետության անվտանգության, բանակի զինման եւ մարտունակության հետ»,-ընդգծում է Մանգասարյանը:

ՊՆ-Ն ԱՆՀԱՊՈՐԴ Է

ArmLur.am-ի հայտնի դարձավ, որ երեկ՝ ժամը 12:00-ին, սեպտեմբերի 13-ի պատերազմի մասնակից, անհետ կորած զինվորների հարազատները հավաքվելու են պաշտպանության նախարարության մոտ, պահանջելու են իրենց երեխաների գտնվելու մասին տեղեկություններ տրամադրել:

«Ես դիմել եմ բոլոր պետական մարմիններին, Կարմիր Խաչին՝ առաջին իսկ օրվանից, բայց ոչ մի նորություն: Տագավորություն է, որ մատների արանքով են նայում, ոչ մի քայլ չեն ձեռնարկում մեր երեխաներին գտնելու համար»: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց անհետ կորած զինվորի հայր Վահե Ղազարյանը: Մեր զրուցակցի խոսքով՝ որդու հետ կապ է եղել մինչեւ սեպտեմբերի 13-ը, որից հետ կապն անվերադարձ ընդհատվել է:

«Ես միայն պահանջում եմ լրջորեն զբաղվել մեր երեխաների որոնողական աշխատանքներով, ինչքա՞ն կարելի է ձգձգել, դուք պատկերացնո՞ւմ եք ծնողների վիճակը: Ինչքա՞ն կարելի է ծնողների ներվերի հետ խաղալ: Առողջ տվել ենք, ո՞րտեղ են մեր երեխաները, իմ տղային մնացել էր 6 ամիս, ո՞ւր է իմ երեխեն: Ցելի վաշտով չկան, վաշտի հրամանատարը չկա, ումի՞ց հարցնեմ իմ երեխու տեղը, եթե ՊՆ-ն անհաղորդ է»,-վրդովված պատմեց Վահե Ղազարյանը՝ նշելով, որ այսօր նախարարության դիմաց բողոքի ակցիա են անելու՝ վերը նշված պահանջով:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՕՐԵՆՔԻ ՈՒԺԸ «ԱՇԽԱՏԵԼ Է»

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ դատական համակարգում նոր բունտ է հասունանում: Պարզվում է՝ եթե ՀՀ նախագահը որեւէ հիմքով առարկություն է ներկայացնում որեւէ դատավորի կամ թեկնածուի վերաբերյալ, ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը դա ընդունում է ի գիտություն: Իսկ, եթե դատավորը կամ թեկնածուն ԲԴԽ-ում ծանոթ ունեն, ապա հնարավոր է լինում շրջանցել ՀՀ նախագահի առարկությունները: Խոսենք փաստերով. «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ սեպտեմբերի 15-ին ԲԴԽ նախագահի պաշտոնակատար Սերգեյ Չիչոյանը հրապարակել էր հայտարարության՝ առ այն, որ Ժորա Արմենի Չիչոյանն իրավունքի ուժով ստանձնել է Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնը: Պարզվում է, որ Ժորա Չիչոյանը ԲԴԽ նախագահի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սերգեյ Չիչոյանի հարազատ եղբոր տղան է, դրա համար էլ օրենքի ուժը «աշխատել է»:

Բանն այն է, որ դատավոր նշանակվելուց առաջ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից թեկնածուները անցնում են բարեվարքության ճանապարհով, եւ հանձնաժողովը դատավորի կամ դատավորի թեկնածուի մասին կարծիք է ներկայացնում, որը հետագայում դրվում է ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի սեղանին, ու նախագահն է որոշում՝ դատավորին ընդունե՞լ դատական համակարգ, թե՞ առարկությամբ հետ ուղարկել: Եվ, ահա, ԲԴԽ նախագահի եղբորորդու՝ Ժորա Չիչոյանի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը բացասական եզրակացություն է տվել, եւ ՀՀ նախագահը Ժորա Չիչոյանի՝ դատավորի նշանակման դիմումը չի ստորագրել ու առարկություններով հետ է ուղարկել: ԲԴԽ-ն՝ ի դեմս նախագահի հորեղբոր, որոշում է կայացրել երկրորդ անգամ դիմել ՀՀ նախգահին, սակայն երկրորդ անգամ էլ նախագահը չի ստորագրել ու առարկությամբ հետ է ուղարկել: Այս ամենից հետո Ժորա Չիչոյանին որոշում են դատավոր նշանակել՝ օրենքի ուժով, եւ նա դատավորի լիազորությունները ստանձնում է օրենքի ուժով, կամ, որ նույնն է՝ հայտնի հորեղբոր թիկունքով:

Սակայն այս պամության մեջ ցավալին այն է, որ ներկայումս շատ դատավորներ են Ժորա Չիչոյանի կարգավիճակում հայտնվել, սակայն ԲԴԽ-ն՝ ի դեմս նախագահ Սերգեյ Չիչոյանի, նրանց մասով որեւէ սրտացավություն չի ցուցաբերել, այլ արագ հանել է նրանց անունները թեկնածուների ցուցակից՝ զրկելով դատավոր դառնալու իրավունքից: Ահա բարեփոխված արդարադատության համակարգի «հմայքը»:

ԱՆՈՒՆՆԵՐ

ՈՎՔԵ՞Ր ՉԱԽՈՂՎԵՑԻՆ ՔՊ-ՈՒՄ

Սեպտեմբերի 25-ին տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ են անցկացվել մի քանի համայնքներում: Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուները պարտվել են 7 համայնքում, սակայն մյուս թեկնածուներից ավել ձայն հավաքած ոչ բոլոր համայնքներում են կարողացել ապահովել անհրաժեշտ 50+ ձայներ եւ պետք է կոալիցիա կազմեն՝ քաղաքապետ ընտրելու համար:

Ո՞ր համայնքներում է ՔՊ-ն պարտվել, եւ ովքե՞ր են զբաղվել քարոզչությամբ: Լոռու մարզի չորս համայնքներից երկուսում ՔՊ-ն պարտվել է, երկուսում էլ առաջատար է, սակայն Գյուլագարակ համայնքում ձայների տարբերությունը շատ չնչին է: Ալավերդի համայնքում նորաստեղծ «Ապրելու երկիր» կուսակցության թեկնածուին պարտվել է ՔՊ թեկնածու, ԱԺ համանուն խմբակցության պատգամավոր Արեն Մկրտչյանը: Տաշիր համայնքում եւս պարտվել է ՔՊ-ն, իսկ Լոռի բերդում իշխող կուսակցությունն առաջատարն է: Այսպիսով՝ այս մարզում կոալիցիաներ կկազմվեն՝ մի քանի համայնքների կառավարումը ստանձնելու համար: Լոռու մարզում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը լծվել էր քարոզարշավի՝ լայն թափով: Այստեղ թեկնածուների հետ ակտիվ քարոզարշավի էր լծված պատգամավոր Արփի Դավոյանը, որը պարբերաբար լուսանկարներ ու տեղեկություն էր տարածում սոցիալական ցանցի իր էջում: Նրա հետ պարբերաբար մարզ են այցելել նաեւ պատգամավորներ Արմեն Խաչատրյանը, Ալխաս Ղազարյանը, Արսեն Թորոսյանը:

Մյուս մարզը, որտեղ ՔՊ-ն լծվել էր քարոզարշավի, Սյունիքի մարզն էր: Այստեղ ընտրություններ են եղել երկու համայնքներում՝ Սիսիան եւ Քաջարան: Վերջին համայնքում հաղթանակ է տարել գործող համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանը, իսկ ահա Սիսիան համայնքում թեկնածուներից ոչ ոք չի հավաքել անհրաժեշտ թվով ձայներ, եւ պետք է կոալիցիա կազմեն՝ քաղաքապետ ընտրելու համար: Սիսիան համայնքում հատկապես ակտիվ է եղել ՔՊ պատգամավոր Կարեն Համբարձումյանը, որը երեկ նաեւ միջադեպի կենտրոնում է հայտնվել: Լուսանկարներում տեսնում ենք նաեւ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանին: Կարեն Համբարձումյանն անում էր ամեն ինչ, որ Սիսիանի քաղաքապետ ընտրվի Արմեն Հակոբջանյանը:

Ի դեպ, Հակոբջանյանի շտաբի պետը հենց Կարեն Համբարձումյանն է: Ուշագրավ է սակայն, որ մյուս թեկնածուն ՔՊ-ական պատգամավոր Կարեն Համբարձումյանի կնոջ քրոջ ամուսնու՝ բաջանաղի, եղբայրն է՝ Արա Ջաքարյանը: Վերջինս առաջադրվել է «Ապրելու երկիր» կուսակցության ցուցակով: Ասել է թե՝ Կարեն Համբարձումյանը դուրս էր եկել հենց իր բաջանաղի եղբոր դեմ, եւ հենց վերջինս է առաջատարը:

Լոռու մարզ այցելելուց բացի՝ Արմեն Խաչատրյանն ակտիվ է եղել հենց իր հայրենի Սյունիքում, մասնավորապես՝ Քաջարան համայնքում, սակայն այստեղ Մանվել Փարամազյանը բացարձակ առաջատարն է: Ուշագրավ պատկեր է Տավուշի մարզում: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի հարազատ մարզում Բերդ համայնքի գործող ղեկավարը, որը կալանավորված է, կարողացել է հաղթանակ տանել. Ղալումյան եղբայրները անզոր են եղել:

Բավականին հետաքրքիր հետընտրական իրավիճակ է Ալավերդի խոշորացվող համայնքում: Տեղական ինքնակառավարման ընտրություններին մասնակցող եւ որեւէ կուսակցություն չի հատել «50+» տոկոսների շեմը: Ալավեդի խոշորացվող համայքնում ընտրությունների 4 ուժ են մասնակցել՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիրը», «Ապրելու երկիրը», ՀՅԴ-ն ու ՀԱԿ-ը:

Ձայների առավելությամբ «Ապրելու երկիր» կուսակցությունն է առաջին տեղում՝ 6791 ձայնով, (48.6 %), երկրորդում՝ իշխանական ՔՊ-ն՝ 6557 ձայնով (47%), երրորդում Հայ ազգային կոնգրեսն է, որ ստացել է 340 քվե (2.3%), Դաշնակցության քվեների թիվը 316 է (2%):

Ձայների հարաբերակցությունը բավականին հետաքրքիր պատկեր է գծագրել Ալավերդիում: Այստեղ որեւէ կուսակցություն առավելագույն թվով մանդատ չի ստացել. Թե՛ ՔՊ-ն, թե՛ «Ապրելու երկիրը» 13-ական մանդատ են ստացել: Թե ո՞վ կստանձնի Ալավերդիի կառավարումը, բառիս բուն իմաստով կորոշի օրենքի ուժով մեկ մանդատ ստացող, անցողիկ շեմը հատած երրորդ ուժը՝ ՀԱԿ-ը: Նշենք, որ թեեւ օրենքը սահմանում է, որ ՏԻՄ ընտրությունների համար անցողիկ շեմը 4 տոկոսն է, բայցեւ օրենքը սահմանում է, որ համայնքի կառավարումը պետք է երեք ուժից կազմված լինի, ու, եթե անգամ 3-րդ ուժը նվազագույն քվեներ է ստացել, նա օրենքի ուժով մանդատ է ստանում:

Ո՞վ ի վերջո կզբաղեցնի թումանյանական աշխարհի այցեքարտ քաղաքի կառավարումը, ըստ տրամաբանության՝ ՀԱԿ-ի վերնախավը կորոշի: ArmLur.am-ի աղբյուրները հայտնում են սակայն, որ քաղուժերն այս պահին ակտիվ քննարկումների մեջ են:

Նշենք, որ այստեղ ՔՊ-ի թեկնածուն ԱԺ համանուն խմբակցության պատգամավոր Արեն Մկրտչյանն է, «Ապրելու երկրինը»՝ Ախթալա խոշորացված համայնքի գործող համայնքապետ Արկադի Թամազյանը, ՀՅԴ-ինը՝ Ախթալայի նախկին քաղաքապետ Սուրեն Թամազյանը, ՀԱԿ-ինը՝ հաշվապահական գրասենյակի ղեկավար Նորայր Գեւորգյանը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 25-ի Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը հանդիպել է ԱՄՆ կոնգրեսական Ադամ Շիֆի հետ:

Արցախի ԱԳՆ-ից հայտնում են, որ քննարկվել են Արցախի ներքին եւ արտաքին քաղաքականությանը, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը, տարածաշրջանային զարգացումներին առնչվող հարցեր:

Արցախի ԱԳ նախարարը երախտագիտություն է հայտնել Ադամ Շիֆին՝ հայ ժողովրդի նկատմամբ ունեցած բարեկամական վերաբերմունքի, ինչպես նաեւ՝ Արցախին մշտապես սատարելու համար եւ ընդգծել, որ Արցախում բարձր են գնահատում կոնգրեսական Շիֆի եւ նրա գործընկերների անձնվեր պայքարը՝ հանուն արցախահայության օրինական իրավունքների պաշտպանության:

ԿԱՅՈՒՆ ԿԱՊԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը սեպտեմբերի 23-ին ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Իսպանիայի Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Մարկոս Գոմես Մարտինեսի գլխավորած պատվիրակությանը:

Նախարարությունից հայտնում են, որ նախարարը ողջունել է դեսպանին, շնորհավորել նշանակման կապակցությամբ եւ հաջողություններ մաղթել հայաստանյան գործունեության ընթացքում:

Նախարարն ընդգծել է Իսպանիայի հետ հարաբերությունների խորացման եւ տարբեր ոլորտներում համագործակցության անհրաժեշտությունը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱԿՐՈՆԻ ՀԵՏ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով մեկնել է Ֆրանսիայի Հանրապետություն:

Երեկ երեկոյան Ելիսեյան պալատում տեղի է կունեցել ՀՀ վարչապետի եւ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հանդիպումը:

ՔՈՒՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՔՈՒՐԴ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՁՄԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Երեկ ԱԺ պատգամավոր Գեղամ Մանուկյանը հայտնել էր. «Աթիլլա Չիչեք եւ Հուսեյին Յըլդրըմ: Երկու քուրդ ազատամարտիկներ, հեղափոխականներ, որ պայքարել են սեփական ժողովրդի ազատագրության համար, պայքարել թուրքական բռնատիրության դեմ: Այդ պայքարի դաշտում ակտիվ գործունեություն են ծավալել նաեւ Դերսիմում: Այն շրջանում, որտեղ Հայոց Ցեղասպանության ժամանակ մեր բազում հայրենակիցներ փրկվել են նաեւ քրդերի շնորհիվ ու հետո մասնակցել Դերսիմի ապստամբությանը: Հիմա նրանք, հայտնվելով Հայաստանի Հանրապետության տարածքում, օրինական ուժի մեջ մտած դատավճռից հետո առեւանգվել եւ հանձնվել են մեր երկրի դեմ 44-օրյա պատերազմի ակտիվ մասնակից, այս օրերին ադրբեջանական ագրեսիայի հովանավոր ցեղասպան Թուրքիայի իշխանություններին: Քրդական աղբյուրները հայտնում են, որ Լեհենգ եւ Ալիշեր գաղտնանուններն ունեցած երկու մարտիկները հանձնվել են թուրքական գաղտնի սպասարկությանը՝ MIT-ին: Թուրքերն իրենց հերթին հպարտությամբ հայտարարում են, որ տարիներ շարունակ որոնվող երկու քրդերը իրենց ձեռքում են հայտնվել՝ գաղտնի հետախուզական գործողության արդյունքում»:

Այս հայտարարությանն արձագանքեց ԱԱԾ-Ն հայտնելով. «Տեղեկացնում ենք, որ շրջանառվող ստահոդ լուրերը ոչ միայն չեն համապասխանում իրականությանը, այլեւ չունեն որեւէ իրավական հիմք. դրանցով փորձ է կատարվում թիրախավորել Ծառայությանը: Տեղեկացվում է, որ քրեական վարույթների շրջանակներում դատապարտված անձանց հանձնման գործընթացը դուրս է Ծառայության լիազորությունների շրջանակից: Ազգային անվտանգության ծառայությունը հորդորում է զերծ մնալ պետական կառույցների հեղինակությունը արատավորող, երկրի արտաքին անվտանգությունը խաթարող ապատեղեկատվություն տարածելու անթույլատրելի գործելաոճից եւ զգուշացնում է, որ Ծառայությունն իր լիազորությունների շրջանակում ստուգողական գործողությունների միջոցով՝ հետամուտ է լինելու պարզելու ստահոդ լուրեր տարածողների իրական շարժառիթները եւ քողարկված մղումները»:

Իրավիճակին արձագանքեց նաեւ ՀՀ արդարադատության նախարարությունը. «Տեղեկացնում ենք, որ արդարադատության նախարարությունն է իրավասու դատապարտյալին փոխանցել իր քաղաքացիության երկիր՝ պատժի մնացած մասը կրելու նպատակով: Սակայն, Արդարադատության նախարարության կողմից համացանցում տարածված՝ ազգությամբ քուրդ Աթիլա Չիչեքին եւ Հուսեյին Յըլդրըմին Թուրքիային փոխանցում չի իրականացվել»:

Ավելին՝ արդարադատության նախարարությունում նշված անձանց հանձնման կամ փոխանցման վերաբերյալ հարց չի քննարկվել»:

Ի վերջո, ի՞նչ ճանապարհով, ի՞նչ պայմաններում են քուրդ ազատամարտիկները հայտնվել Թուրքիայում: ArmLur.am-ը զրուցեց ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր, ազգությամբ քուրդ, ԱԺ-ում քրդական համայնքի ներկայացուցիչ Կնյազ Հասանովի հետ:

«Ես չեմ կարող ասել քանի որ ես տեղեկություն չունեմ այդ մասին, ոչ հանձնողներն են ասում՝ հանձնել են, ոչ էլ ստացողներն են ասում՝ ստացել ենք, նկատի ունեմ՝ թուրքական իշխանությունները: Քրդական «Բանվորական կուսակցություն»-ն է հայտնել, որ Հայաստանն է հանձնել, ես չեմ կարող ասել՝ ինչ հիմքերով են ասում: Այս ամենին ես հետեւում եմ սոցիալական ցանցերում, ողջ կատարվածի մասին պետք է խոսել փաստերով, որոնք ես չունեմ»- ասել է Հասանովը իր խոսքում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Երեկ ԱԺ պատգամավոր Գեղամ Մանուկյանը, ինչպես նշել ենք, հայտնել էր երկու քուրդ ազատամարտիկների մասին, ներկայացնելով. «Աթիլլա Չիչեք եւ Հուսեյին Յըլդրըմ: Երկու քուրդ ազատամարտիկներ, հեղափոխականներ, որ պայքարել են սեփական ժողովրդի ազատագրության համար, պայքարել թուրքական բռնատիրության դեմ: Այդ պայքարի դաշտում ակտիվ գործունեություն են ծավալել նաեւ Դերսիմում: Այն շրջանում, որտեղ Հայոց Ցեղասպանության ժամանակ բազում մեր հայրենակիցներ փրկվել են նաեւ քրդերի շնորհիվ ու հետո մասնակցել Դերսիմի ապստամբությանը: Հիմա նրանք, հայտնվելով Հայաստանի Հանրապետության տարածքում, օրինական ուժի մեջ մտած դատավճռից հետո առեւանգվել եւ հանձնվել են մեր երկրի դեմ 44-օրյա պատերազմի ակտիվ մասնակից, այս օրերին ադրբեջանական ագրեսիայի հովանավոր ցեղասպան Թուրքիայի իշխանություններին: Քրդական աղբյուրները հայտնում են, որ Լեհենգ եւ Ալիշեր գաղտնանուններն ունեցած երկու մարտիկները հանձնվել են թուրքական գաղտնի սպասարկությանը՝ MIT-ին: Թուրքերն իրենց հերթին հպարտությամբ հայտարարում են, որ տարիներ շարունակ որոնվող երկու քրդերը իրենց ձեռքում են հայտնվել գաղտնի հետախուզական գործողության արդյունքում»:

Այս հայտարարությանն արձագանքեց ԱԱԾ-Ն հայտնելով. «Տեղեկացնում ենք, որ շրջանառվող ստահոդ լուրերը ոչ միայն չեն համապասխանում իրականությանը, այլեւ չունեն որեւէ իրավական հիմք. դրանցով փորձ է կատարվում թիրախավորել Ծառայությանը: Տեղեկացվում է, որ քրեական վարույթների շրջանակներում դատապարտված անձանց հանձնման գործընթացը դուրս է Ծառայության լիազորությունների շրջանակից»:

Իրավիճակին արձագանքեց նաեւ ՀՀ արդարադատության նախարարությունը. «Տեղեկացնում ենք, որ Արդարադատության նախարարությունն է իրավասու դատապարտյալին փոխանցել իր քաղաքացիության երկիր՝ պատժի մնացած մասը կրելու նպատակով: Սակայն, արդարադատության նախարարության կողմից համացանցում տարածված՝ ազգությամբ քուրդ Աթիլա Չիչեքին եւ Հուսեյին Յըլդրըմին Թուրքիային փոխանցում չի իրականացվել»:

Ավելին՝ արդարադատության նախարարությունում նշված անձանց հանձնման կամ փոխանցման վերաբերյալ հարց չի քննարկվել»:

Իսկ ինչի՞ մեջ էին մեղադրվում ազատամարտիկները. Աթիլա Չիչեքին եւ Հուսեյին Յըլդրըմին մեղադրվում էին, որ իրենք, չունենալով զենք եւ ռազմամթերք ձեռք բերելու, պահելու, փոխադրելու իրավունք, ինչպես նաեւ զենքի եւ ռազմամթերքի շրջանառությունը իրականացնելու թույլտվություն, ապօրինի կերպով՝ կրելով եւ փոխադրելով հրազեն հանդիսացող՝2 հատ ինքնաձիգ, 1 հատ ատրճանակ, ռազմամթերք հանդիսացող 318 հատ փամփուշտ եւ 4 հատ նռնակ, 2021 թվականի օգոստոսի 16-ին անցել են Արաքս գետն ու ապօրինի հատել ՀՀ պահպանվող պետական սահմանը, միաժամանակ իրենց հետ մաքսանենգությամբ ՀՀ են տեղափոխել հիշյալ հրազեններն ու ռազմամթերքը:

Վճռաբեկ բողոքները վարույթ չեն ընդունվել: Ասել է թե՝նրանք ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի ուժի մեջ մտած որոշմամբ ազատության մեջ են եղել: Այս իրավիճակում հարց է առաջանում՝նրանց ո՞վ եւ ինչպե՞ս Հայաստանից տեղափոխեց Թուրքիա:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱԿԱՆԱՏԵՍՆԵՐ ԵՆ ԵՂԵԼ

Սեպտեմբերի 20-ին՝ ժամը 19:00-ին, ոստիկանության Ճամբարակի բաժնում «Ճամաբարակ» բժշկական կենտրոնից ահազանգ ստացվեց, որ կտրած-ծակած վերքերով իրենց մոտ է տեղափոխվել 1990 թվականին ծնված Սիփան Սարիբեկյանի դին: Սպանված տղամարդը ոստիկանության Ճամբարակի բաժնի ավագ օպերլիազորն էր՝ կապիտան: Հիվանդանոցի բակում հայտնաբերվեց նաեւ նրա մեքենան, սրահում էլ՝ արնանման հետքեր: Դեպքից հետո Սիփան Սարիբեկյանին հենց նրա մեքենայով էին հասցրել բուժհաստատության բակ ու հեռացել: Նախաձեռնվեց քրեական վարույթ: Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության եւ Ճամբարակի բաժնի ծառայողները սկսեցին ձեռնարկել միջոցառումներ՝ հանցագործությունը թարմ հետքերով բացահայտելու ուղղությամբ: Ճամբարակ ժամանեցին ոստիկանության պետի առաջին տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Արամ Հովհաննիսյանը, քրեական ոստիկանության գլխավոր վարչության, ներքին անվտանգության վարչության, Գեղարքունիքի մարզային վարչության ղեկավար կազմը, այլ պաշտոնատար անձինք: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում պարզվեց, որ Սիփան Սարիբեկյանին դանակով մի քանի անգամ հարվածներ էին հասցրել Ճամբարակի Գետափնյա փողոցի արագ սննդի կետում: Նշված վայրում եւս հայտնաբերվեցին արնանման հետքեր: Հետագա միջոցառումներով հայտնի դարձան ներկաների, նաեւ կասկածվողի ինքնությունը. Ճամբարակի բնակիչ 37-ամյա Սամվել Սոսյանն էր: Համապատասխան դատավարական գործողություններից հետո սեպտեմբերի 23-ին նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Սամվել Սոսյանի գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություն ունեցողներին խնդրում ենք դիմել ոստիկանություն կամ զանգահարել 1-02, 010 59-06-13 հեռախոսահամարներով: Տեղեկություն տրամարդող անձի գաղտնիությունը երաշխավորվում է: Դեպքի բոլոր հանգամանքները, նաեւ շարժառիթը, նախաքննությամբ պարզվում են: Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ օպերլիազորին սպանելու դեպքի ականատեսներ են եղել եւ իրավապահներին պատմել են, թե ինչպես է եղել դեպքը:

ՄԱՀԸ ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է

2022 թվականի սեպտեմբերի 26-ին՝ ժամը 00:15-ի սահմաններում, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ, 1987թ. ծնված, ՀՀ ՔՕ 34-107 . 104հ. 2մ. դատապարտված Զ. Կ.-ի ինքնազգացողությունը կտրուկ վատթարացել է: Տեղում ցուցաբերվել է առաջին բուժօգնություն եւ միեւնույն ժամանակ կանչվել է շտապօգնություն:

Ժամը 00:30-ին ժամանած շտապօգնության կողմից արձանագրվել է Զ. Կ.-ի կենսաբանական մահը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 23-ից 26-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 112 դեպք, որից 6-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

«ԶՈՐԱՎՈՐ ՀԱՄԱՅՆՔԸ» ՀԱՂԹԵՑ

Սեպտեմբերի 25-ին կայացան Բերդ խոշորացված համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով հերթական ընտրությունները: Իջեւան քաղաքում տեղակայված թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Աիդա Սարգսյանը հայտնեց, որ ընտրություններում ընտրական օրենսգրքի խախտումներ չեն արձանագրվել, բողոքներ չկան: Բերդ համայնքի ավագանու ընտրություններում՝ ընտրողների ցուցակներում ընդգրկվածների թիվը կազմել է 22485, քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը՝ 11095, քվեարկությանը մասնակցել է ընտրողների թվի 49,34 տոկոսը: Ըստ ԿԸՀ-ի հրապարակած տվյալների՝ քվեարկության արդյունքում «Իմ հզոր համայնք» դաշինքի եւ Վահան Բաբայանի «Ռեֆորմիստների» կուսակցության կազմած դաշինքը՝ «Զորավոր համայնքը» ստացել է 5685, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ 4298, «Արդարություն» կուսակցության եւ «Քաղաքացու որոշում սոցիալ-դեմոկրատական կուսակցության ստեղծած դաշինքը՝ «Արժանապատիվ սերունդը»՝1097 քվե, անվավեր քվեաթերթիկների թիվը եղել է 15, անճշտությունները՝ 1: «Զորավոր համայնքը» ստացել է քվեարկության մասնակիցների քվեների 51,7 տոկոսը, դա բավարար է համայնքի ավագանու մանդատների մեծ մասը ստանալու եւ առանց կոալիցիա կազմելու՝Բերդ խոշորացված համայնքի ղեկավար ընտրելու համար: Հարություն Մանուչարյանը 2021թ. նոյեմբերի 9-ից անազատության մեջ է, նա պահվում է «Արմավիր» ՔԿՀ-ում:

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի մաս կազմող Վանաձոր-Բագրատաշենի մաքսակետ 51, 74 կմ երկարությամբ ճանապարհի հիմնանորոգումը սկսվել է 2018թ.-ին, այն իրականացվում է Ասիական զարգացման բանկի (44.04 մլն եվրո) եւ ՀՀ կառավարության (10.14 մլն եվրո) համաֆինանսավորմամբ: Այդ ճանապարհը պետք է շահագործման հանձնվեր 2020թ. նոյեմբերին: Հույս կա, որ 2022-ի տարեվերջին ճանապարհի կառուցապատումը կավարտվի: Ո՞վ է պատասխան տալու հիմնանորոգման գործը 2 տարով ուշացնելու համար՝հիմնանորոգման նախագիծը սխալ կազմողնե՞րը, թե՞ նորոգումն անորակ իրականացրած, այդ պատճառով լրացուցիչ աշխատանքներ կատարած ճանապարհաշինական ընկերությունները: Նախկին իշխանության օրոք կառուցվող եւ նորոգվող ավտոճանապարհների սկզբնամասում, ճանապարհի եզրին ցուցանակ էր փակցվում, որտեղ տեղեկություններ էին գրված ճանապարհի կառուցման կամ՝ հիմնանորոգման ժամկետների, ֆինանսավորման աղբյուրների, կապալառու, ենթակապալառու եւ վերահսկող կազմակերպությունների վերաբերյալ: Ներկայումս նման ցուցանակներ չկան, կարելի է ենթադրել՝թե ինչո՞ւ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԳՈՐԾԸ ԳՏՆՎՈՒՄ Է ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Քաղաքացի Կարինե Վերանյանը բաց նամակ է գրել «Ժողովուրդ» օրաթերթին եւ ՀՀ Ազգային անվտանգության Ծառայության ղեկին: Նամակը ներկայացված է ստորեւ.

«Հայտնում եմ, որ 1989թ.-ի դեկտեմբերից բնակվում եմ ք. Երեւան 16 թաղամասի 26 շենք, 5 բնակարանում: 1989թ.-ից մինչեւ 2001թ.-ը վերը նշված հասցեում բնակվել եմ ամուսնուս հետ: Ամուսինս՝ Ռազմիկ Սարգսյանը, 2001թ.-ին մեկնել է ԱՄՆ՝ բուժվելու, եւ այնտեղ մահացել է, մինչեւ նրա մահը եւ նրա մահից հետո՝առ այսօր, այդ հասցեի բնակարանի հետ կապված բոլոր վճարները կատարվել է իմ կողմից, բնակարանը տնօրինում եւ տիրապետում եմ ես, ինձանից բացի նշված բնակարանը որեւէ մեկը չի տիրապետել: Ամուսինս՝ առանց ինձ տեղեկացնելու, 1992թ.-ին բնակարանը նվիրել է առաջին ամուսնությունից ծնված տղային՝ Արթուր Սարգսյանին, որի մասին ես տեղեկացել եմ 1999թ.-ին: Ամուսինս մահից առաջ ինձ է տվել «Համաձայնություն» անվանված փաստաթուղթ, համաձայն որի՝ Արթուր Սարգսյանը համաձայնություն է տվել, որ բնակարանը հայրը վաճառի, տնօրինի, որը ինձ հույս է տվել, որ նա իրականում հրաժարվել է վիճելի գույքից, սակայն 2008թ.-ից նա սկսել է ինձ անհանգստացնել, պահանջել, որ ազատեմ բնակարանը: 2012թ-ին «ձեռք բերման վաղեմության ուժով եւ տիրապետման փաստով» դիմել եմ դատարան, սակայն դատարանը ինձ մերժել է այն դեպքում, որ Արթուր Սարգսյանը 1992թ.-ից առ այսօր գտնվում է Միացյալ Նահանգներում. վիճելի բնակարանին վերաբերող որեւէ վճարում չի կատարել երբեւէ, վիճելի բնակարանում չի բնակվել, անգամ բնակարանի տեղը չգիտի: Ինձ համար անհասկանալի է՝ի՞նչն է այդքան շահագրգռել ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին եւ վերաքննիչ դատարանի դատավոր Ա. Խառատյանին, որ գտել են, որ ես՝ 72 տարեկան Կ. Վերանյանս, պետք է բնակվեմ փողոցում, իսկ 30 տարի Միացյալ Նահանգներում բնակվող Արթուր Սարգսյանը դառնալու է իմ բնակարանի սեփականատերը: Վերաքննիչ դատարանը՝ ամիսներով վարույթ ընդունելու որոշում չի կայացնում. իմ գործը մոտ երեք ամսվա ընթացքում վարույթ ընդունեց եւ մերժեց: Ինչո՞վ է Միացյալ Նահանգներում բնակվող Արթուր Սարգսյանը շահագրգռել երկու ատյանի դատարաններին, որ որոշել են, որ ես պետք է փողոցում հայտնվեմ:

Հայտնում եմ, որ բնակարանը 1989թ.-ին ամուսնուս հետ գնել ենք 24 հազար ռուսական ռուբլիով, որից 21 հազարը տվել էր հայրս. քանի որ ես համոզված էի, որ բնակարանը իմն է, կատարել էի շինարարական աշխատանքներ, փոխել էի խոհանոցը եւ պատշգամբը:

Ակնկալում եմ Ձեր օգնությունը՝պարզելու, թե ո՞րն է երկու դատարանների շահագրգռվածությունը, արդյո՞ք շահագրգիռ են եղել՝ի վնաս ինձ վճիռ կայացնելու, որ Միացյալ Նահանգների քաղաքացին ավելի կարեւոր է քան ես, որ 30 տարի տնօրինում եւ տիրապետում եմ այդ բնակարանին, անխոնջ ծառայել եմ ՀՀ-ին, կենսաթոշակառու եմ, չունեմ երեխաներ, չունեմ այլ բնակության վայր եւ այժմ պիտի հայտնվեմ փողոցում:

Խնդրում եմ՝ ճշտեք, եթե դատարանները շահագրգիռ են եղել հակաօրինական վճիռ կայացնելու եւ որոշակի անձինք օգնել են նրանց, ապա խնդրում եմ՝հայտնաբերեք եւ օրենքի ուժով պատժեք նրանց: Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0659/02/13 գործում առկա են իմ կողմից ներկայացվածի բոլոր ապացույցները, անհրաժեշտության դեպքում՝ ամբողջ փաթեթը կներկայացնեմ: Հարգելի, Ազգային անվտանգության աշխատակիցներ, ես խիստ կասկածներ ունեմ, որ ՀՀ դատական համակարգը՝ի դեմս Առաջին ատյանի եւ ՀՀ վերաքննիչ դատարանի, ինչ-որ գործարքի են գնացել Արթուր Սարգսյանին հետ, ինչի արդյունքում ինձ փորձում են դուրս հանել իմ բնակարանից: Այս պահին գործս գտնվում է Վճռաբեկ դատարանում, եւ խնդրում եմ ուշադիր լինել հնարավոր կոռուպցիոն դեպքերից: Ի դեպ, հարգելի իրավապահներ, ես տեղեկություններ ունեմ, որ Արթուր Սարգսյանը Հայաստանը լքել է 1992 թվականին՝պատերազմից խուսափելու եւ բանակում չծառայելու համար: Ավելին՝ հայտնեմ, որ նա Երեւան քաղաքում ունի բնակարան, որը գտնվում է Բաշինջաղյան 173/4 հասցեում, եւ այս պայմաններում փորձում է ինձ՝միայնակ կնոջս, թողնել անտուն:

Կարինե Վերանյան

ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ՉԱԽՈՂՎԵՑԻՆ

Լոռու մարզի Ալավերդի համայնքի ՏԻՄ ընտրություններում ՔՊ-ն ավելի փիչ ձայն է հավաքել, քան օրինակ, «Ապրելու երկիր» կուսակցությունը:

Ձայների առավելությամբ «Ապրելու երկիր» կուսակցությունն է առաջին տեղում՝ 6791 ձայնով, (48.6 %), երկրորդում՝ իշխանական ՔՊ-ն՝ 6557 ձայնով (47%), երրորդում «Հայ Ազգային կոնգրեսն» է, որ ստացել է 340 քվե (2.3%), «Դաշնակցության» քվեների թիվը 316 է (2%): Նշենք, որ այստեղ ՔՊ-ի թեկնածուն ԱԺ համանուն խմբակցության պատգամավոր Արեն Մկրտչյանն է, «Ապրելու երկրինը»՝ Ախթալա խոշորացված համայնքի գործող համայնքապետ Արկադի Թամազյանը, ՀՅԴ-ինը՝ Ախթալայի նախկին քաղաքապետ Սուրեն Թամազյանը, ՀԱԿ-ինը՝ հաշվապահական գրասենյակի ղեկավար Նորայր Գեւորգյանը: Այսինքն՝ այս պահի դրությամբ ամեն դեպքում, ստացվում է, որ Արեն Մկրտչյանը, լինելով իշխող թիմի թեկնածուն, քիչ ձայն է հավաքել եւ պարտվել է: Նկատենք՝ սա առաջին դեպքը չէ, երբ իշխող խմբակցության պատգամավորը փորձել է դառնալ համայնքի ղեկավար եւ ձախողվել է: Նրանցից է նաեւ Դավիթ Դանիելյանը: Վերջինս 2021 թվականին պարտություն կրեց Կապանում. այստեղ հաղթանակ տարավ «Շանթ» դաշինքը, որի թեկնածուն Գեւորգ Փարսյանն էր: 2021 թվականին ՏԻՄ ընտրություններում պարտվեց նաեւ Նարեկ Գրիգորյանը: Նա առաջադրվել էր Գավառում՝ համայնքի ղեկավարի ընտրությունների համար, սակայն պարտվել էր գործող համայնքապետ Գուրգեն Մարտիրոսյանին:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 37 ճՏՊ. 2 մարդ զոհվել է, 60-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է Սուսաննա Էդուարդի Հովսեփյանին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- Արարատի մարզ, համայնք Այնթապ, 20-րդ փողոց, 8-րդ նրբանցք, 4 հասցեում գտնվող 149,41 ք.մ. բնակելի տուն եւ 0,0851 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 28480000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 13.10.2022թ.-ին ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2022թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է եւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ համապատասխան գույքի աճուրդի ավարտին նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.akson.am կայքը:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ»

25 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐԻ ԱՋԱԿՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ

«Ակբա բանկի» և «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի» (ՎԶԵԲ) համագործակցության արդյունքում 25 մլն ԱՄՆ դոլար կուղղվի Հայաստանի տնտեսության զարգացմանը՝ միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ, ինչպես նաև կանանց կողմից ղեկավարվող ընկերություններին ֆինանսավորելու միջոցով: Ֆինանսավորումը տրամադրվելու է և՛ ՀՀ դրամով, և՛ ԱՄՆ դոլարով:

Նշված միջոցներից շուրջ 7 միլիոն ԱՄՆ դոլարն «Ակբա բանկը» ներգրավել է EU4Business-EBRD վարկային գծի ծրագրի շրջանակում, որի շնորհիվ բանկը տեղական ընկերություններին կօգնի դառնալ ավելի մրցունակ՝ իրենց ապրանքների եւ ծառայությունների որակի բարձրացման, ինչպես նաեւ «կանաչ» տեխնոլոգիաներում ներդրումներ կատարելու միջոցով: EU4Business նախաձեռնության շրջանակում Եվրոպական միությունը նաեւ խրախուսական դրամաշնորհներ՝ քեշբեքներ եւ անվճար տեխնիկական աջակցություն կտրամադրի: Որպես 25 միլիոն ԱՄՆ դոլար ֆինանսական փաթեթի մաս՝ 4 միլիոն ԱՄՆ դոլար էլ կտրամադրվի «Կանայք բիզնեսում» (WiB) ծրագրին, որը խթանում է կանանց մասնակցությունը բիզնեսում եւ աջակցություն է ստանում ԵՄ-ի կողմից: Ստորագրման արարողությանը մասնակցել է նաեւ Եվրոպական միության պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Հեսսը:

««Ակբա բանկը» եւ «Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը» համագործակցության հարուստ պատմություն ունեն: ՎԶԵԲ-ի հետ մեր ամուր համագործակցությունը սկսել ենք 2003 թվականից: Այժմ մենք 25 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորման նոր պայմանագրեր ենք ստորագրում, որի մի մասը կրկին տեղական արժույթով է: Այս միջոցներով Ակբա բանկը կֆինանսավորի հայաստանյան ՓՄՁ-ներին, բիզնեսը հնարավորություն կստանա ԵՄ չափանիշներին համապատասխան անհրաժեշտ տեխնոլոգիաներ եւ սարքավորումներ ներգրավել: Ծրագրի կարեւոր է կոմպոնենտ է կանանց ձեռներեցության խթանումը»,- նշել է «Ակբա բանկի» գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

«Հայաստանում «Ակբա բանկը» մեզ համար առանցքային գործընկեր է: Հպարտ ենք՝ շուրջ քսան տարվա մեր համագործակցության համար: Ցանկանում ենք Հայաստանում նոր հնարավորություններ ստեղծել ՓՄՁ-ների զարգացման համար, կարեւոր է աջակցել նաեւ կանանց կողմից կառավարվող ընկերություններին: Շարունակելու ենք աջակցել տնտեսության մասնավոր հատվածին եւ նպաստել Հայաստանի զարգացմանը: Համագործակցության համար շնորհակալ ենք նաեւ Եվրոպական միությանը, որն աջակցել է այս ֆինանսավորմանը: Այս ամենից բացի, ցանկանում եմ «Ակբա բանկին» շնորհավորել նաեւ տեղական շուկայում իր բաժնետոմսերի՝ առաջնային հրապարակային տեղաբաշխում իրականացնելու համար: Սա շատ կարեւոր էր ե՛ւ բանկի զարգացման, ե՛ւ երկրի տնտեսության համար»,- նշել է ՎԶԵԲ-ի նախագահ Օդիլ Ռենո-Բասոն:

«Ակբա բանկը» Հայաստանի բանկային համակարգի առաջատարներից է, երկրի գյուղոլորտի ֆինանսավորման բացարձակ առաջատարը: 2021 թվականին իրականացված բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխումից (IPO) հետո «Ակբա բանկն» ունի ավելի քան 5200 բաժնետեր: Թվային նորագույն լուծումների ներդրման, ինչպես նաեւ նոր տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ բանկն անդադար զարգացնում է տրամադրվող ֆինանսական ծառայությունների քանակն ու որակը: «Ակբան» ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, ունի 63 մասնաճյուղ, համարվում է երկրի եւ ֆինանսական համակարգի խոշոր գործատուներից մեկը:

1992 թվականից սկսած՝ ՎԶԵԲ-ը Հայաստանում՝ 201 ծրագրում, ներդրել է շուրջ 2 միլիարդ եվրո:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴ

Գյուլնարա Ստեփանի Այանյանի սեփականության իրավունքով պատկանող եւ պարտավորությունների կատարման ապահովման համար «Էվոկաբանկ» ՓԲԸ-ում գրավադրված անշարժ գույքի աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

22.09.2022թ ժամը 13:00-ին ք. Երեւան , Արշակունյաց 5. 311 դահլիճ հասցեում նշանակված Գյուլնարա Ստեփանի Այանյանի սեփականության իրավունքով պատկանող եւ պարտավորությունների կատարման ապահովման համար «Էվոկաբանկ» ՓԲԸ-ում գրավադրված բաց դասական եղանակով աճուրդը՝ 1 ընդհանուր լոտով տեղի չի ունեցել հայտ չլինելու պատճառով 10.10.2022թ ժամը 13:00-ին ք. Երեւան, Արշակունյաց 5. 311 դահլիճ հասցեում կկայանա

Գյուլնարա Ստեփանի Այանյանի սեփականության իրավունքով պատկանող եւ պարտավորությունների կատարման ապահովման համար «Էվոկաբանկ» ՓԲԸ-ում գրավադրված բաց դասական եղանակով գույքի կրկնաճուրդ նախորդ աճուրդից 10%-ով իջեցված մեկնարկային գնով, որը բաղկացած է 1 ԼՈՏԻՑ:

Լոտ 1. ՀՀ Արարատի մարզ, Նոր Խարբերդ 3-րդ փողոց, տուն 4/6 /սեփականության վկայականի համար՝N 28082014-03-0023, մակերեսի չափը 0.02116 հա, կադաստրային ծածկագիր՝03-070-0100-0014, բնակելի տուն 100.9քմ կադաստրային ծածկագիրը - 03-070-0100-0014-001, ծածկ 4.8քմ կադաստրային ծածկագիրը- 03-070-0100-0014-002, պարիսպ 5.09քմ, 8.14խմ կադաստրային ծածկագիրը- 03-070-0100-0014-003/ (գույքի բնութագիրը՝մեկ հարկանի, պատերը-քարե, ներքին հարդարման վիճակը՝հատակը լամինատ եւ սալիկ առկա է ջրամատակարում, գազամատակարում, էլեկտրամատակարարում) որի մեկնարկային գինը սահմանվել է 11.383.470 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հայտի ներկայացման վերջնաժամկետը՝05.10.2022թ. ժամը 18:00 կարող են հայտ ներկայացնել սնանկության դատարան՝ք.Երեւան, Օտյան 53/2 հասցեով: Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար աճուրդի կանոնակարգով սահմանվում է մուտքի վճար՝ 5000 ՀՀ դրամ, որը վճարվում է սնանկության հատուկ հաշվին: Հայտին կից ներկայացվում է աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարման անդորրագրերը, ֆիզիկական անձինք՝նաեւ իրենց անձնագրի պատճենը, իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերը՝նաեւ իրենց պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Աճուրդի մասնակցության վճարը լոտի մեկնարկային գնի 1 /մեկ/ տոկոսի չափով (բայց ոչ ավել, քան 200.000 ՀՀ դրամ), իսկ նախավճարը՝5 /հինգ/ տոկոսի չափով, մինչեւ հայտի ներկայացման պահը պետք է վճարվեն պարտապանի սնանկության հատուկ դրամային հաշվին («Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, h/h 1150014510910960)՝որպես ստացող նշելով պարտապանին:

Հայտի ներկայացմանն առնչվող հարցերը, աճուրդի անցկացման եւ աճուրդի արդյունքներով պայմանավորված հարաբերությունները կանոնակարգվում են ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանով հաստատված կարգով, որը համարվում է աճուրդի կանոնակարգ (բացառությամբ այդ կարգի 2-րդ, 10-րդ, 11-րդ, 16-րդ, 34-րդ, 36-րդ կետերի, եւ աճուրդի մասնակից չհամարվող անձանց մուտքի մասով դրույթների, որոնք սույն աճուրդի մասով չեն գործում): Հայտի ձեւը, աճուրդի կանոնակարգը, հաղթողի կողմից ստորագրման ենթակա՝աճուրդի արդյունքների մասին արձանագրության օրինակը ազատ կարող եք ստանալ աճուրդի օրը՝աճուրդի կազմակերպչից (սնանկության գործով կառավարչից)՝աճուրդն սկսվելուց առաջ՝աճուրդի անցկացման վայրում:

Եթե լոտերի թիվը մեկից ավելի է, ապա դրանց աճուրդները կազմակերպվում են շարադրված հերթականությամբ: Լոտի աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Աճուրդի հաղթողը (այդ թվում՝ հարկային գործակալը) լոտի վաճառքի գինը պարտավոր է ամբողջությամբ վճարել աճուրդի օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում:

Եթե լոտը իրավաբանական անձի սեփականություն է, ապա լոտի վաճառքի գինը ներառում են նաեւ հարկերը, իսկ եթե ֆիզիկական անձի սեփականություն է, ապա լոտի վաճառքի գնի մեջ չեն ներառվում հարկային գործակալների կողմից վճարման ենթակա հարկերը:

Աճուրդին մասնակցելու, առուվաճառքի պայմանագրի կնքման, անհրաժեշտության դեպքում՝դրանից ծագող իրավունքների պետական գրանցման եւ/կամ գնված գույքն ուրիշի տիրապետումից հետո պահանջելու եւ/կամ գույքը գնորդի փաստացի տիրապետմանն անցնելու հետ կապված գործողություններն ու դրանց առնչվող բոլոր ծախսերը, առուվաճառքի պայմանագրի կնքման համար անհրաժեշտ եւ առուվաճառքի պայմանագրից բխող բոլոր այլ (ցանկացած տեսակի) ծախսերը կատարվում են աճուրդի հաղթողի կողմից:

Գույքի նոտարական ձեւակերպման, պետ. գրանցման եւ վտարման հետ կապված վճարային պարտավորությունները կրում է գնորդը Լոտը կարելի է ուսումնասիրել սույն հայտարարության հրապարակման օրվանից 10 օրվա ընթացքում, աշխատանքային օրերին եւ ժամերին՝դրա գտնվելու վայրում՝նախապես պայմանավորվելով կառավարչի հետ:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Լ.Պետրոսյանին՝ 098033366 հեռախոսահամարով:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԼԻՆԵԼ ՄԻՇՏ ԱՌԱՋՆԱԳԾՈՒՄ». ՇՈՒՇԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Սեպտեմբերի 23-ին վաստակավոր արտիստուհի, երգչուհի, ԱԺ նախկին պատգամավոր Շուշան Պետրոսյանը նշել է ծննդյան 55-ամյակը: Երգչուհին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց, որ որեւէ բան նշելու տրամադրություն եւ ցանկություն չունի:

«Տրամադրությունս՝ չլքել առաջնագիծը, լինել միշտ առաջնագծում, անդավաճան, հանուն հայրենիքի, հանուն մեր զավակների, նոր ծնվող երեխաների՝ լուսավոր ապագայի, անկախ Հայաստանում ապրելու, վերականգնելու արժանապատվությունը ու հաղթանակների խորհուրդը»,-անդրադառնալով իր երազանքին՝ նշեց երգչուհին:

Երգչուհին գիտակցում է, որ ճանապարհը հեշտ չի լինելու, պետք է շատ դժվարություններ հաղթահարել, բայց անկոտրում է. այլ տարբերակ չկա: Ըստ նրա՝ պետք է փառքով եւ արժանապատվությամբ հաղթահարենք:

Նշենք, որ Շուշան Պետրոսյանը ծնվել է 1967թ.-ի սեպտեմբերի 23-ին Երեւանում: 1987թ.-ին ավարտել է Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի գեղանկարի ֆակուլտետը: 1993թ.-ին ավարտել է Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի գրաֆիկայի ֆակուլտետը: 1989 -1991թթ.-ին աշխատել է «Արձագանք» թատրոն-ստուդիայում (Մետրո թատրոն) որպես հագուստի եւ բեմի նկարիչ: Ձեւավորել է 3 ներկայացում՝ «Առասպելական հավերժություն», «Անտիգոնե», «Տերն ու ծառան»: 1994-1997թթ-ին. աշխատել է Երգի պետական թատրոնում: 1996թ.-ից Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի մենակատար է: 2002-2003 թթ.-ին աշխատել է Երեւանի կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտում որպես դասախոս: 2005թ.-ից Բնության եւ հասարակության մասին միջազգային ակադեմիայի ակադեմիկոս է: 2006թ.-ին արժանացել է Հայաստանի վաստակավոր արտիստի կոչման: Ամուսնացած է եւ ունի երկու զավակ: Հիշեցնենք , որ Շուշան Պետրոսյանը հայաստանյան էստրադային երգարվեստի ոլորտում բավականին հայտնի երգչուհի է: Նա մասնակցել է Հայաստանում եւ արտասահմանում՝ հայկական սփյուռքի ներկայացուցիչների համար կազմակերպված համերգների, հանդես է եկել մենահամերգներով: Հատկապես հայտնի է նրա երգած «Երազի իմ երկիր Հայաստան» եւ «Սպարապետ» երգերը: Վերջին երգը երգչուհին նվիրել է Վազգեն Սարգսյանին:

Երգչուհու ստացած մրցանակներն են՝ 1993թ. գլխավոր մրցանակ («Շարմ Շոու» միջազգային փառատոն),1996թ. «Տարվա լավագույն երգչուհի» («Ասուպ» մրցանակաբաշխություն),

2000թ. «20-րդ դարի հայ աստղ» («Աստղ» փառատոն), 2000թ. «Լավագույն կին կատարող» («Անուշ» մրցանակաբաշխություն, ԱՄՆ), 2004թ. «Անկախ Հայաստանի լավագույն ձայն» («Կռունկ» փառատոն), 2009թ. «Դիվա» մրցանակ (երգի ամենամյա փառատոն, ԱՄՆ):

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՐՑՈՒՅԹԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

«Առաջին ալիքը» եւ Եվրոպական հեռարձակողների միությունը հայտնում են, որ Երեւանում կայանալիք «Մանկական Եվրատեսիլ» մրցույթի այս տարվա խորհրդանիշ է ընտրվել միջազգայնորեն ճանաչված խաղալիք հոլը:

Հոլի այս տեսակը հատուկ է հայկական մշակույթին եւ զարդարված է ազգային նախշերով, որոնք Հայաստանում կարելի է տեսնել պատմական-ճարտարապետական հուշարձանների, գորգերի եւ հագուստի վրա: Ավանդական փայտե խաղալիքներին տրվել է նեոնային տեսք, որն արտացոլում է ժամանակակից Հայաստանը:

«Մանկական Եվրատեսիլ» երգի մրցույթն իր 20-րդ պտույտն է կատարում արեւի շուրջը: Շեշտը դնելով փոքրիկներին ուրախություն եւ զվարճանք բերող այս անվերջ շրջապտույտի վրա՝ «Հանրային հեռուստաընկերությունն» ընտրել է «Պտտի՛ր հրաշքը» կարգախոսը:

*Սահմանային իրավիճակով պայմանավորված՝ «Հանրային հեռուստաընկերությունը» հետաձգել էր «Մանկական Եվրատեսիլ 2022» մրցույթի բրենդինգի հրապարակման օրը: Այնուամենայնիվ, մրցույթի նախապատրաստական աշխատանքները շարունակվում են, եւ ըստ ժամանակացույցի՝ վերջնաժամկետները փոփոխել այլեւս հնարավոր չէր: Հուսով ենք, որ «Մանկական Եվրատեսիլի» կազմակերպչական աշխատանքները եւ բուն մրցույթը կանցկացվեն խաղաղության պայմաններում, եւ մեզ հնարավորություն կտրվի երեխաներին իրական երաժշտական տոն պարգեւել Երեւանում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

2022թ. հոկտեմբերի 17-ին՝ ժամը 15:00-ին, Յուրի Սելիպանովի սնանկության գործով՝ կառավարիչ Վ. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, 311 սենյակ հասցեում կանցկացվի Յուրի Սելիպանովի սեփականություն իրավունքով պատկանող հետեւյալ գույքի աճուրդային վաճառք՝ բաց դասական եղանակով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ- 1. ՀՀ ք. Երեւան, Կենտրոն համայնք, Չարենցի փող. 27ա շենքի բակում գտնվող ավտոտնակը/36.9 քմ./: Մեկնարկային գինը սահմանվում է 4 631 842 ՀՀ դրամ,

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետակա գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը:

- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1% չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի՝ 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը: Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Յուրի Սելիպանովի սնանկության հատուկ հաշվին՝ «Արդշինբանկ ՓԲԸ-ի» Էրեբունի մասնաճյուղ՝ 2472304369220000 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը, կարող են հայտ ներկայացնել Սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/: Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ՝ դիմելով կառավարիչ Վ. Էլոյանին / 041 44 58 57 /:

ԼՈՒՐԵՐ

Team Telecom Armenia

Team Telecom Armenia-ի աջակցությամբ իրականացվող Koreez 2022 համադպրոցական մրցույթն ամփոփվեց: Մրցույթին մասնակցել են շուրջ 800 հանրակրթական դպրոցների ավելի քան 11000 աշակերտներ եւ ուսուցիչներ Հայաստանից ու Արցախից:

Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցած մրցանակաբաշխության ընթացքում լավագույն արդյունքներ գրանցած 80 աշակերտները, ինչպես նաեւ նրանց ուսուցիչներն ու տնօրենները պարգեւատրվեցին բազմաթիվ արժեքավոր եւ խրախուսական մրցանակներով:

Մրցույթի 5-րդ դասարանցի երեք լավագույն մասնակիցները՝ Սյունիքի մարզի Տեղ գյուղից Սուրեն Գյագունցը, Երեւանից Մանե Սահակյանը եւ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքից Բագրատ Արշակյանը, Team Telecom Armenia-ի կողմից ստացան նոութբուք, պլանշետ եւ սմարթֆոն:

«Այս մրցանակները երեխաների աշխատասիրության ու ձգտման գնահատականն են: Հուսով եմ՝ դրանք կմոտիվացնեն ու կնպաստեն նրանց՝ թվային աշխարհում կրթության անխոչընդոտ ընթացքին»,- նշեց Team-ի կոմերցիոն տնօրեն Կարեն Շաբոյանը:

5-րդ դասարանցիների մեջ առաջին տեղը գրաված Սուրեն Գյագունցը սովորում է Տեղ գյուղի 1-ին միջնակարգ դպրոցում ու ամենից շատ հետաքրքրվում է մաթեմատիկայով.

«Մրցույթի ընթացքում եղել են հարցեր մաթեմատիկայից, հայոց լեզվից, բնագիտությունից ու ընդհանուր տրամաբանությունից: Կային եւ հեշտերը, եւ՛ բարդերը, բայց կարողացա հաղթահարել, քանի որ դպրոցի դասերից դուրս էլ ինքնուրույն շատ եմ պարապում: Այս նոութբուքն էլ կօգնի, որ մաթեմատիկայից է՛լ ավելի հետաքրքիր խնդիրներ գտնեմ»:

Koreez մրցույթն անցկացվում էր արդեն երկրորդ անգամ: Այն առարկայական առցանց մրցույթ է, որին կարող են մասնակցել ՀՀ եւ ԱՀ դպրոցների 5-12-րդ դասարանի բոլոր աշակերտները՝ անկախ դպրոցում ունեցած առաջադիմությունից: Մրցույթի ընթացքում յուրաքանչյուր աշակերտ հնարավորություն է ստանում հատուկ հարցաշարերի միջոցով ստուգել ուսումնական տարում ձեռք բերած գիտելիքները:

ՄՐՑԱՇԱՐԵՐԻ ՀԱՂԹՈՂ

«Մեծ սաղավարտի» մրցաշարերի 23-ակի հաղթող, կարիերան ավարտած ամերիկացի Սերենա Ուիլյամսը պատմել է, որ շատ է մտերմացել ռուսաստանցի Մարիա Շարապովան, որը նույնպես ավարտել է կարիերան, արդեն երկար տարիներ ապրում է ԱՄՆ-ում, վերջերս մայր է դարձել:

«Հիմա Մարիա Շարապովան է իմ լավագույն ընկերուհին է: Ներիր Կարոլինա Վոզնյացկի: Մարիան առաջինն է, ում կարող եմ զանգել եւ քննարկել առօրյա գործերը: Մայրությունը մեզ շատ է մտերմացրել: Մենք նաեւ ընդհանուր մոտեցումներ ունենք որոշ ոլորտներում ներդրումների հարցով»:

● *Հոկտեմբերի 1-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Հինգ պատմություն սիրո մասին» ներկայանցումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ: Սկիզբը՝19:00:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Կազմակերպությունում տեղի է ունեցել տնօրենի փոփոխություն: Ե՞րբ պետք է փոփոխության մասին տեղյակ պահել հարկային մարմնին:
Դավիթ Մարտիրոսյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Կազմակերպություններին եւ ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու եւ հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենք 9-րդ հոդվածի, կազմակերպությունների պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի եւ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց, նոտարների, դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցում ստացած կազմակերպությունների հաշվառման ժամանակ պահանջվող տվյալների փոփոխության դեպքում հարկ վճարողը պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել իրենց սպասարկող հարկային մարմնին մինչեւ փոփոխությունների տեղի ունենալուն հաջորդող ամսվա 20-ը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անհրաժեշտ է ղեկավարվել «Կազմակերպություններին եւ ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու եւ հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի դրույթներով, որի համաձայն՝ կազմակերպությունների հաշվառման ժամանակ պահանջվող տվյալների փոփոխության դեպքում հարկ վճարողը պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել իրենց սպասարկող հարկային մարմնին մինչեւ փոփոխությունների տեղի ունենալուն հաջորդող ամսվա 20-ը:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:
Ռաիսա Թադեւոսյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում: Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ ArmLur.am-ից:

Երեկվա՝ սեպտեմբերի 26-ի դրությամբ, Գառնի-Երեւան երթուղու արժեքը կրկնակի թանկացել է: Սպասարկող ընկերությունն ինքն է որոշել նոր երթուղայինների գները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.09.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: